



# Holy Trinity Armenian Apostolic Church

101 Ashmead Road

Cheltenham, Pennsylvania

(215) 663-1600

Հայկազուն Մ. Վրդ. Մեկգոնեան, Հոգևոր Հովիւ

VERY REV. HAIGAZOUN MELKONIAN

Pastor

Յունիս 29, 1993

Գերաշնորհ Տ. Խաժակ Արքեպ. Պարսամեան, Առաջնորդ  
Առաջնորդութիւն Հայոց Ամերիկայի  
630 Second Avenue  
New York, New York 10016

<< Որ ի փոքուն հաւատարիմ է՝ եւ ի բազմին հաւատարիմ է, եւ որ  
ի փոքուն անիրաւ է՝ եւ ի բազմին անիրաւ է >> : Դուկաս ԺՁ :10

Գերաշնորհ Սրբազան Հայր .

Խախուտ այս կացութեան որուն մէջ այժմ կը գտնուինք, լոկ AIDS-ի անհիմն վախին հետ առնչութիւն չունի այլ՝ աւելի տարրական աստուածաբանական հարցի մը հետ : Մեր հաւատացեալները սկսած են տարակուսել մեր եկեղեցւոյ կանոններուն, ուսուցումներուն եւ հիմնական վարդապետութեան մասին, որոնք բրիտանական հիմնադրութենէն ի վեր ընդունուած են առանց այլեւայլի բոլոր ուղղափառ եկեղեցիներու կողմէ : Մեր եկեղեցւոյ անվճարականութիւնն ու անորոշութիւնը ընթացք կու տայ այս ողբալի կացութեան :

Վերջին տասնամեակներուն մեր հաւատացեալներուն լուրջ կրօնական հարցերը անպատասխան մնացած են : Յանախ աղմկալից փոքրամասութիւն մը կրցած է իր կամքը զօրել լուր ու լուրջ մեծամասնութեան վրայ : Զվստահելով եկեղեցւոյ նուիրապետութեան կարգին կարողացած են որոշ առաջնորդներուն նաեւ համոզել թէ ամէն փոփոխութիւն << բարեփոխում >> մըն է, որ ոչ միայն սխալ է այլ՝ մոլորեցուցիչ : Ցատկապէս մեր հաւատացեալներուն մեծամասնութիւնը գայթակղեցուցած են եւ կասկած արթնցուցած իրենց սրտերուն մէջ բոլոր կղերներուն անկեղծութեան մասին :

*Մ. Երրորդութիւն Հայաստանեայց Առաքելական Եկեղեցի*

Մեր եկեղեցականներուն շատերը մաս ունեցած են Մայր Եկեղեցոյ տկարացման, հանոյք առնելով նուիրապետութեան ուժարեկման եւ ժողովրդի կողմէ հղած անվստահութեան : Այս բոլորը իմ հասկացողութենէս դուրս է սակայն նկատած եմ որ անխորտակելի սրբութիւն մը, անդրժելի ասանդութիւն մը կամ անխախտելի ուխտ մը չմնաց մեր եկեղեցական կարգերէն ներս : Հնազանդութիւն առաջնորդաց կամ տարրական յարգանք մեծաւորաց այլիս անցեալին կը պատկանի :

Լուրջ աստուածաբանական քննարկութիւն, սերտողութիւն հին մատենագրութեանց կամ գիտնական հետազոտութիւն ցարդ տեղի տուած է կեղծ եւ մակերեսային յօդուածներուն, որոնք բացմիցս մէկ աղբիւրէ կամ աւելի վատ՝ մէկ տողի վրայ հիմնուած անջատուած եւ թիւր մեկնաբանութիւններով կը ներկայացուին հայ մամուլին իբրև հեղինակաւոր աշխատանքներ : Նորէն գրուած եւ դրկուած մամուլին կարգ մը մեր եկեղեցականներու կողմէ :

Քանի որ << ի փոքուն >> հաւատարիմ չենք մնացած զարմանալի չէ որ << ի բազմին >> չենք կրցած հաւատարիմ մնալ : Եւ անգամ մը եւս նոյն աղմուկի փոքրամասութիւնը, առաջնորդուելով այն եկեղեցականներու խումբէն, որոնք մոռցած են իրենց ուխտը հնազանդութեան եւ հաւատարմութեան՝ յանդգնօրէն իրենց անհիմն կածիքներն ու որոշումները՝ Սուրբ Գրոց, Սրբազան Աւանդութեանց եւ Սրբոց Հայրապետաց մատենագրութեանց կը գերադասեն :

Այսօր, նոյն իսկ Սրբութիւն Սրբոցը, մեր տիրոջ անապական եւ կենարար Մարմինն ու Արիւնը, իրենց վարակուած հետազոտութեան ենթակայ է : Այն ինչ որ Մայր Եկեղեցին ինքը սրբացուց այսինքն՝ Սուրբ Գիրքը այժմ մեզ կը դատէ, << եւ որ ի փոքուն անիրաւ է՝ եւ ի բազմին անիրաւ է >> : Այս խօսքերը պէտք չեն մեզի զարմանք պատճառեն այլ խորունկ վհատութիւն եւ սրտմտութիւն :

Մեր բարի հաւատացեալ ժողովրդի մեծամասնութիւնը փոփոխութիւն չուզեր : Այլ իրենց նայուաբը կ'ուղղեն Մայր Եկեղեցիին՝ քնտրելու իրենց հոգիներուն համար հանգստութիւն, անսասանութիւն եւ այդ տիեզերան նշարտութիւնները, մշտափոփոխ այս աշխարհին՝ որով կարենան ունենալ հաւատքի խարիսխ մը : Ժամանակը եկած է եւ մանաւանդ այս ընկերայն (դասային) մտնողորդին մէջ, որ վերահաստատենք Եկեղեցոյ դերը մեր անհատական եւ հաւաքական կեանքէն ներս :

Մատչիմ ի համբոյր Ա. Աջոյդ՝

Հայկազուն Մ. Վրդ. Մելգոնեան